



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/13225/05/21

Նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան

Դատավորներ՝

Հ. Խաչատրյան

Գ. Սոսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/13225/05/21

2025թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող և զեկուցող

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

2025 թվականի հուլիսի 18-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 17.10.2024 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Ֆելիքս Բարսեղյանի ընդդեմ Կոմիտեի՝ 13.10.2021 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1232/1 որոշումը վերացնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ֆելիքս Բարսեղյանը պահանջել է վերացնել Կոմիտեի՝ 13.10.2021 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1232/1 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Զարիկյան) (այսուհետ՝ Դատարան) 28.09.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.10.2024 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 28.09.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ և 203-րդ հոդվածները, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 2-րդ, 84-րդ, 105-րդ, 401-րդ և 405-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չի հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, վերլուծելով Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մի շարք դրույթներ, այդ թվում՝ 84-րդ հոդվածը, եկել է եզրահանգման, որ հայտարարագիր ներկայացնող անձը ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված արարքի համար պատասխանատու սուբյեկտ չէ:

Վերաքննիչ դատարանի՝ վարչական մարմնի կողմից իրավախախտման սուբյեկտին սխալ ընտրելու վերաբերյալ դատողությունները հակասում են ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4748/05/19 և թիվ ՎԴ/3684/05/20 վարչական գործերով տվյալ նորմին տրված մեկնաբանությանը, որի համաձայն՝ մաքսային ներկայացուցիչ իրավաբանական անձի աշխատակիցը կարող է ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված արարքի համար վարչական պատասխանատվության սուբյեկտ հանդիսանալ այն պարագայում, եթե հաստատվի կատարված արարքում մաքսային ներկայացուցիչ իրավաբանական անձի աշխատակցի մեղավորությունը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ մաքսային ներկայացուցիչը մաքսային հայտարարագրումն իրականացնում է հայտարարատուի անունից և նրա հանձնարարությամբ, ունի միևնույն իրավունքները և պարտականությունները, ինչ հայտարարատուն: Տվյալ դեպքում մաքսային ներկայացուցիչ «Պարտնյոր Կարգո» ՍՊԸ-ի անունից հանդես է եկել Ֆելիքս Բարսեղյանը:

Միաժամանակ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ «Պրոֆպանել» ՍՊ ընկերության անվամբ ներկայացված թիվ 05100010/111021/0063267 ապրանքների հայտարարագիրը ոչ ճշգրիտ տեղեկություններով ներկայացնելու համար ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հատկանիշներով պատասխանատվության պետք է ենթարկվի հայտարարագիրը լրացնող անձը, որը ապրանքի մաքսային արժեքի վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ ներկայացնելու պարտականություն է կրել, և որի գործողությունների կամ անգործության արդյունքում առաջացել է մաքսային վճարների պակաս հաշվարկում:

Այսինքն՝ իրավախախտումը թույլ է տվել Ֆելիքս Բարսեղյանը, որն էլ սույն դեպքում հանդիսանում է վարչական պատասխանատվության ենթարկելու համար պատշաճ սուբյեկտ:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.10.2024 թվականի որոշումը և հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) «Պարտնյոր Կարգո» ՍՊԸ-ի (Կատարող) և «Պրոֆպանել» ՍՊԸ-ի (Պատվիրատու) միջև 01.02.2021 թվականին կնքվել է «Մաքսային միջնորդական ծառայությունների մատուցման» թիվ 4 պայմանագիրը, որի համաձայն՝ պատվիրատուն հանձնարարում է, իսկ կատարողը ստանձնում է մաքսային միջնորդի ծառայության մատուցման պարտավորությունը (**գ.թ. 73-74**):

2) 01.10.2021 թվականի թիվ 10/21 լիազորագրի համաձայն՝ «Պրոֆպանել» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Վրեժ Մանվելյանի, լիազորել է Ֆելիքս Բարսեղյանին հանդես գալ «Պրոֆպանել» ՍՊԸ-ի անունից ՀՀ ՊԵԿ Մաքսային ծառայությունում և կատարել ընկերության հետ կապված գործողություններ, ստանալ փաստաթղթեր, լրացնել ապրանքային հայտարարագրեր (**գ.թ. 38**):

3) Ֆելիքս Բարսեղյանի կողմից «Պրոֆպանել» ՍՊ ընկերության անվամբ 11.10.2021 թվականի թիվ 05100010/111021/0063267 ապրանքների հայտարարագրով «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով հայտարարագրվել են 46.970 կգ ընդհանուր քաշով ապրանքներ՝ արևային պանելների արտադրության համար նախատեսված թրծված ապակիներ՝ 3.2 ՄՄ հաստությամբ՝ 3000 հատ (**գ.թ. 29-30**):

4) Կոմիտեի Արարատյան մաքսատուն վարչության գլխավոր մաքսային տեսուչ-իրավաբանի կողմից 13.10.2021 թվականին կազմվել է «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրություն, որով արձանագրվել է, որ «Պրոֆպանել» ՍՊԸ-ի 13.10.2021 թվականի թիվ 05100010/111021/0063267 ապրանքների հայտարարագիրը ներկայացվել է ոչ ճշգրիտ տեղեկություններով: Այսինքն՝ Ֆելիքս Բարսեղյանի արարքում առկա են ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտման հատկանիշներ (**գ.թ. 36-37**):

5) Կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պետի 13.10.2021 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1232/1 որոշման համաձայն՝ Կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պետ Կ. Բաբայանը, քննելով «Պրոֆպանել» ՍՊ ընկերության լիազոր անձ Ֆելիքս Բարսեղյանի վերաբերյալ նյութերը, պարզել է, որ Ֆելիքս Բարսեղյանի կողմից «Պրոֆպանել» ՍՊ ընկերության անվամբ թիվ 05100010/111021/0063267 ապրանքների հայտարարագրերով «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով հայտարարագրվել է բեռ, սակայն հայտարարագրի 45-րդ սյունակում չի ներառվել փոխադրման ծախսերի 2-րդ հաշվի-

ապրանքագիրը՝ ընդհանուր 384.000 ՀՀ դրամ, այսինքն՝ հայտարարագիրը ներկայացվել է ոչ ճշգրիտ տեղեկություններով:

Հայտարարագրված ապրանքատեսակը ճանապարհածախսի և համապատասխան մաքսային արժեքի վերաբերյալ ճշգրիտ տվյալներով հայտարարագրելու արդյունքում 11.10.2021 թվականի դրությամբ կառաջանար մաքսային վճարների պակաս հաշվարկում՝ ընդհանուր 768.000 ՀՀ դրամի չափով (հիմք՝ զեկուցագիր թիվ Ն/20-1/184392-2021 առ 13.10.2021թ.): Այսպիսով, «Պրոֆպանել» ՍՊԸ նկերության լիազոր անձ Ֆելիքս Բարսեղյանը թույլ է տվել ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մաքսային կանոնների խախտում՝ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելով, որի հետևանքով առաջացել է մաքսային վճարների պակաս հաշվարկում: Նշվածի հիմքով՝ 13.10.2021 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1232/1 որոշմամբ որոշվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մաքսային կանոնների խախտում կատարելու համար «Պրոֆպանել» ՍՊԸ նկերության լիազոր անձ Ֆելիքս Բարսեղյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանելով 384.000 ՀՀ դրամի չափով (**գ.թ. 33-34**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքարկվող դատական ակտում ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի մեկնաբանությունը հակասում է թիվ ՎԴ/4748/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.10.2022 թվականի և թիվ ՎԴ/3684/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.04.2023 թվականի որոշումների մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը:

Սույն բողոքի քննության շրջանակում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված զանցանքի համար վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտային կազմին՝ վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածը սահմանում է «վարչական իրավախախտում» հասկացության բովանդակությունը, այն է՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, պետության անվտանգության ապահովման, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ուղղվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Նույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է անզգուշությամբ կատարված, եթե այն կատարած անձը կանխատեսել է իր գործողության կամ անգործության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու դրանք կամ չի կանխատեսել այդպիսի հետևանքներ առաջանալու հնարավորությունները, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթակա են այն անձինք, որոնց տասնվեց տարին լրացել է մինչև վարչական իրավախախտում կատարելու պահը:

Վերը նշված իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական զանցակազմը հետևյալ չորս տարրերի համակցությունն է՝ վարչական զանցանքի օբյեկտ (ոտնձգության առարկա հասարակական հարաբերությունները), վարչական զանցանքի օբյեկտիվ կողմ (զանցանքի բովանդակություն), վարչական զանցանքի սուբյեկտ (ֆիզիկական անձ, պաշտոնատար անձ) և վարչական զանցանքի սուբյեկտիվ կողմ (անձի հոգեբանական վերաբերմունքը արարքի և դրա հետևանքների նկատմամբ): Նշված տարրերից որևէ մեկի բացակայությունը բացառում է վարչական զանցակազմի առկայությունը:

Իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ մաքսային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) (ուժը կորցրել է 17.10.2022 թվականին) 189-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է «մաքսային կանոնների խախտում» հասկացության բովանդակությունը, այն է՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար նույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

Օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է 38-րդ գլխով և Վարչական

իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նույն գլխին չհակասող մասով:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշմամբ առանձնացրել է վարչական պատասխանատվության հիմնական սկզբունքները: Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ, 32-րդ և 279-րդ հոդվածների համադրված վերլուծության արդյունքում արձանագրել է, որ «վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Այդ սկզբունքն է ընկած նաև մաքսային կանոնների խախտման համար պատասխանատվության հիմքում: (...) Հետևաբար՝ մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը: Նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաև վարչական պատասխանատվության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պատասխանատվության սկզբունքին, որի համաձայն անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ կատարած իրավախախտման համար: (...)»:

ՀՀ վճռաբեկ դատարանը, բացահայտելով վարչական պատասխանատվությանը հատուկ «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» սկզբունքների բովանդակությունը, նախկինում կայացրած որոշմամբ փաստել է. անձնական պատասխանատվության սկզբունքը նշանակում է, որ անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության միայն անձամբ իր կողմից կատարված զանցանքի համար: Իսկ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգուշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին (*յրե՛ս, Արսեն Խաչատրյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/4936/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Վերոհիշյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մաքսային կանոնների խախտումը վարչական իրավախախտում է, որն առանձնանում է վարչական զանցանքի օբյեկտով՝ ունեցության առարկա հասարակական հարաբերությունների տեսակով: Վարչական պատասխանատվությանը հատուկ «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» սկզբունքները հավասարապես կիրառելի են մաքսային խախտումների համար պատասխանատվության նկատմամբ:

Օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործած 203-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը, որի արդյունքում առաջանում է մաքսային

վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է չհաշվարկված կամ պակաս հաշվարկված մաքսային վճարների գանձում օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև տուգանք՝ այդ մաքսային վճարների 50 տոկոսի չափով:

Նշված զանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները կամ տրանսպորտային միջոցները.

-չհայտարարագրելու,

-ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելու, կամ

-հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ հայտարարագրելու ձևով:

ՀՀ վճարեկ դատարանը, անդրադառնալով Օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված զանցակազմին, արտահայտել է հետևյալն իրավական դիրքորոշումը. «(...) քննարկվող մաքսային կանոնների խախտման համար օրենսդիրը ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսել է վարչական պատասխանատվություն: Այսինքն՝ հայտարարատուն կարող է ենթարկվել պատասխանատվության, եթե տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չի հայտարարագրել կամ ոչ իր անվամբ է հայտարարագրել կամ հայտարարագրման ժամանակ նշել է ոչ ճշգրիտ տեղեկություններ: Նշված վարչական իրավախախտումն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության սահմանված կարգի դեմ և դրսևորվում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելու կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելու կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու եղանակով: Թվարկված արարքների կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ պակաս հաշվարկված կամ չհաշվարկված մաքսային վճարների հիսուն տոկոսի չափով: Ընդ որում, այս պատասխանատվության միջոցը վրա է հասնում այն դեպքում, երբ մաքսային մարմինն ոչ ճշգրիտ տեղեկություն ներկայացնելու արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում» (տե՛ս, Աբդուլմաջիդ Աբդուլազիզ Ֆավազ Ալիոկաիրին ընդդեմ ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի՝ թիվ ՎԴ/3530/05/14 վարչական գործով ՀՀ վճարեկ դատարանի 01.08.2019 թվականի որոշումը):

ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները հայտարարագրելու պարտականությունը և այդ պարտականությունը կրող սուբյեկտների շրջանակը սահմանված է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով:

Այսպես, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ և 32-րդ ենթակետերի համաձայն՝ հայտարարատուն անձ է, որը հայտարարագրում է ապրանքներ կամ որի անունից հայտարարագրվում են ապրանքներ, իսկ մաքսային հայտարարագիրը մաքսային փաստաթուղթ է, որը պարունակում է տեղեկություններ ապրանքների վերաբերյալ կամ ապրանքների բացթողման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ: Նույն կետի 44-րդ ենթակետի համաձայն՝ մաքսային ներկայացուցիչն իրավաբանական անձ է, որը ներառված է մաքսային ներկայացուցիչների

ռեեստրում և մաքսային գործառնություններ է կատարում հայտարարատուի կամ շահագրգիռ այլ անձի անունից և հանձնարարությամբ (...):

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 82-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հայտարարատուները, փոխադրողները, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձինք, այլ շահագրգիռ անձինք մաքսային գործառնություններն իրականացնում են անմիջականորեն կամ այդ անձանց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների միջոցով:

Հայտարարատուի, փոխադրողի, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձի, այլ շահագրգիռ անձի անունից մաքսային գործառնությունները կարող է իրականացնել մաքսային ներկայացուցիչը, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այդ անձանց հանձնարարությամբ գործող այլ անձ:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտարարատուն իրավունք ունի՝

1) զննելու և չափելու մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքները և բեռնային գործողություններ կատարելու դրանց հետ:

2) մաքսային մարմնի՝ նույն Օրենսգրքի 17-րդ հոդվածին համապատասխան տրված թույլտվությամբ փորձանմուշներ և (կամ) նմուշներ վերցնելու մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքներից:

3) ներկա գտնվելու մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից մաքսային տեսազննման և մաքսային զննման ձևով մաքսային հսկողություն անցկացնելու և այդ անձանց կողմից ապրանքներից փորձանմուշներ և (կամ) նմուշներ վերցնելու ժամանակ:

4) ծանոթանալու իր կողմից հայտարարագրվող ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ուսումնասիրության արդյունքներին, որոնք առկա են մաքսային մարմիններում:

(...):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարատուն պարտավոր է՝

1) կատարել ապրանքների մաքսային հայտարարագրում:

2) նույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում մաքսային մարմին ներկայացնել մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթեր:

(...):

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հայտարարատուն, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, պատասխանատվություն է կրում նույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված պարտականությունները չկատարելու, մաքսային հայտարարագրում ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու, ինչպես նաև մաքսային ներկայացուցչին անվավեր, այդ թվում՝ կեղծ և (կամ) ակնհայտ ոչ հավաստի (սուտ) տեղեկություններ պարունակող փաստաթղթեր ներկայացնելու համար:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մաքսային հայտարարագրումն իրականացվում է հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կողմից, եթե նույն օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ մաքսային հայտարարագրում նշման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանափակվում է միայն այն տեղեկություններով, որոնք անհրաժեշտ են մաքսային վճարների հաշվարկման և վճարման, ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառման, մաքսային վիճակագրության ձևավորման, արգելքների և սահմանափակումների պահպանման նկատմամբ հսկողության, մաքսային մարմինների կողմից մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության համար միջոցների ձեռնարկման, ինչպես նաև մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի և անդամ պետությունների օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողության համար:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքների հայտարարագրում նշման են ենթակա հետևյալ տեղեկությունները՝ ապրանքների մասին՝ անվանումը, նկարագրությունը, որն անհրաժեշտ է այն մաքսային վճարների, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի և այլ վճարների հաշվարկման և գանձման համար, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին, արգելքների և սահմանափակումների պահպանման, ներքին շուկայի պաշտպանության միջոցների, մաքսային մարմնի կողմից մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության համար միջոցների ձեռնարկման, նույնականացման, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 10 նիշ ունեցող ծածկագրերից մեկին դասելն ապահովելու համար. ապրանքների ծածկագիրը՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան (...):

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մաքսային ներկայացուցիչը հայտարարատուի կամ այլ շահագրգիռ անձանց անունից և նրանց հանձնարարությամբ իրականացնում է մաքսային գործառնություններ այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմնի կողմից նա ընդգրկվել է մաքսային ներկայացուցիչների ռեեստրում՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերին և ակտերին համապատասխան:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մաքսային ներկայացուցչի հարաբերությունները հայտարարատուների կամ այլ շահագրգիռ անձանց հետ ձևավորվում են պայմանագրային հիմքի վրա:

Նույն օրենսգրքի 404-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային գործառնություններ իրականացնելիս մաքսային ներկայացուցիչն ունի նույն իրավունքները, որոնք ունի այն անձը, որը լիազորում է նրան ներկայացնելու իր շահերը մաքսային մարմինների հետ փոխհարաբերություններում:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ իր գործունեությունն իրականացնելիս մաքսային ներկայացուցիչն իրավունք ունի իր կողմից ներկայացվող անձից պահանջելու մաքսային գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ, այդ թվում՝ առևտրային, բանկային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք կազմող տեղեկատվություն կամ այլ գաղտնի տեղեկատվություն պարունակող փաստաթղթեր և տեղեկություններ, և

այդ փաստաթղթերն ու տեղեկություններն ստանալու այնպիսի ժամկետներում, որոնցով ապահովվում է նույն օրենսգրքով սահմանված պահանջների կատարումը:

Իրավահարաբերության ծագման պահին գործած «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 17.10.2022 թվականին) 27-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային ներկայացուցիչը հայտարարատուի կամ նրա լիազորած անձի հանձնարարությամբ և նրա անունից Միության մաքսային օրենսդրությամբ սահմանված մաքսային գործառնություններ իրականացնող՝ Միության մաքսային օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված իրավաբանական անձն է: Մաքսային ներկայացուցչի և հայտարարատուի կամ նրա լիազորած անձի միջև հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրերով:

Նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային ներկայացուցչի անունից մաքսային ձևակերպումներ կարող է իրականացնել միայն մաքսային ներկայացուցչի հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող կամ նրա լիազորած՝ կոմիտեի սահմանած կարգով մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում ստացած Հայաստանի Հանրապետության քաղաքացին:

Վերը նշված նորմերի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների հայտարարագրումը, այսինքն՝ մաքսային հայտարարագրում ապրանքների վերաբերյալ տեղեկությունների և ապրանքների բացթողման համար անհրաժեշտ այլ տեղեկությունների նշումը կատարվում է կամ հայտարարատուի կողմից անձամբ, կամ վերջինիս հետ պայմանագրային հիմքի վրա ձևավորվող հարաբերությունների մեջ գտնվող մաքսային ներկայացուցչի կողմից, որն իրավաբանական անձ է, և որի համար պատասխանատվություն Օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված արարքների համար օրենսդրությամբ սահմանված չէ: Հայտարարագրելիս մաքսային ներկայացուցիչն ունի նույն իրավունքները, ինչ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 84-րդ հոդվածով վերապահված է հայտարարատուին:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված արարքի համար պատասխանատվության ենթակա սուբյեկտային կազմին, արձանագրել է, որ «(...) Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելու կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու համար հայտարարատուին և (կամ) մաքսային ներկայացուցիչ իրավաբանական անձի աշխատակցին վարչական պատասխանատվության սուբյեկտ դիտարկելու համար նախևառաջ պետք է պարզվի վերոգրյալ արարքում վերջիններիս **մեղավորությունը**, քանի որ օրենսդիրը նաև դրանով է պայմանավորել անձին վարչական պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորությունը, ուստի հայտարարատուն և(կամ) մաքսային ներկայացուցիչ իրավաբանական անձի աշխատակիցը կարող է վարչական պատասխանատվության սուբյեկտ հանդիսանալ և նրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային

միջոցները չհայտարարագրելու կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու համար վարչական պատասխանատվություն կիրառվի այն պարագայում, եթե հաստատվի կատարված արարքում հայտարարատուի և(կամ) մաքսային ներկայացուցիչ իրավաբանական անձի աշխատակցի մեղավորությունը» (տե՛ս, Արտակ Նասիբյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/4748/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.10.2022 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նշված դիրքորոշումը, մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ «(...) Օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված արարքների համար պատասխանատվության սուբյեկտ կարող է հանդիսանալ ինչպես հայտարարատուի անունից հայտարարագրումը կատարած մաքսային ներկայացուցչի աշխատակիցը, այնպես էլ հայտարարատուն (իրավաբանական անձ հայտարարատուի պարագայում՝ ըստ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ համապատասխան պաշտոնատար անձը), որպիսի պայմաններում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» սկզբունքներին համապատասխան վարչական պատասխանատվության վարույթն իրականացնող վարչական մարմնի խնդիրն է պարզել՝ Օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված արարքն ում մեղքով է կատարվել՝ հայտարարագիրը լրացրած մաքսային ներկայացուցչի աշխատակցի, թե հայտարարատուի: Մասնավորապես, հարկ է պարզել, արդյո՞ք հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը հայտարարատուի կողմից մաքսային ներկայացուցչին անվավեր, այդ թվում՝ կեղծ և (կամ) ակնհայտ ոչ հավաստի (սուտ) տեղեկություններ պարունակող փաստաթղթեր ներկայացնելու արդյունք է, որպիսի վարքագծի համար պատասխանատվության սուբյեկտը, ըստ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 84-րդ հոդվածի 3-րդ կետի, հայտարարատուն է: Հարկ է պարզել նաև՝ արդյո՞ք հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը մաքսային ներկայացուցչի աշխատակցի կողմից օրենսդրությամբ և հայտարարատուի ու մաքսային ներկայացուցչի միջև կնքված պայմանագրով սահմանված պարտականությունների ոչ պատշաճ կատարման արդյունք է:

Վերոհիշյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական պատասխանատվության վարույթն իրականացնող վարչական մարմինը բավարար ապացույցների համակցությամբ պետք է հիմնավորի պատասխանատվության ենթարկվող՝ մաքսային ներկայացուցչի աշխատակցի մեղքի (դիտավորությամբ կամ անզգուշությամբ) առկայությունը, իսկ վարչական պատասխանատվության վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատարանի խնդիրն է պարզել՝ արդյո՞ք վարչական մարմինը բավարար ապացույցների համակցությամբ հիմնավորել է պատասխանատվության ենթարկվող անձի մեղքի առկայությունը» (տե՛ս, Մերի Թևոսյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/4086/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.09.2024 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Ֆելիքս Բարսեղյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել Կոմիտեի՝ 13.10.2021 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1232/1 որոշումը:

Դատարանը 28.09.2022 թվականի վճռով բավարարել է Ֆելիքս Բարսեղյանի հայցը՝ պատճառաբանելով, որ «(...) դատարանը եզրակացնում է, որ Մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված իրավախախտման համար պատասխանատվություն կրող սուբյեկտը հայտարարատուն է կամ մաքսային ներկայացուցիչը՝ կախված նրանից, թե ով է սխալ տեղեկություններ ներկայացրել մաքսային մարմնին: Ընդ որում, մաքսային ներկայացուցիչը համապատասխան ռեեստրում ներառված իրավաբանական անձն է, որը պայմանագրային հիմունքներով ներկայացնում է հայտարարատունին, այդ թվում՝ նրա անունից ներկայացնելով ապրանքների հայտարարագրերը:

Նշվածից հետևում է, որ իրավաբանական անձ հանդիսացող մաքսային ներկայացուցչի աշխատակիցը, ով ֆիզիկապես իրականացնում է մաքսային ներկայացուցչի գործառույթները, չի կարող Մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածում ամրագրված զանցակազմի սուբյեկտ համարվել: Նա մաքսային հարաբերություններում հանդես չի գալիս ո՛չ հայտարարատուի, ո՛չ մաքսային ներկայացուցչի կարգավիճակով: Ապրանքների հայտարարագրումը մաքսային ներկայացուցչի կողմից իրականացվելու դեպքում պատասխանատուն մաքսային ներկայացուցիչն է՝ անկախ նրանից, թե ով է վերջինիս անունից ֆիզիկապես կատարում անհրաժեշտ գործողությունները: Իսկ այն հարցը, թե իրավաբանական անձ հանդիսացող մաքսային ներկայացուցչի վրա դրվող պատասխանատվությունը ինչպես է բաշխվում իրավաբանական անձի ներսում, դուրս է մաքսային հարաբերությունների տիրույթից:

Դատարանն արձանագրում է, որ տվյալ գործով ներմուծված ապրանքների հայտարարագրումն իրականացվել է մաքսային ներկայացուցչի՝ «ՊԱՐՏՆՈՅՐ ԿԱՐԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2021 թվականի փետրվարի 1-ին կնքված պայմանագրի հիման վրա: Անվիճելի է, որ հայցվորը մաքսային ներկայացուցչի աշխատակիցն է, ով իրականացնում է մաքսային ձևակերպումները (...):

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ հայցվորը, տվյալ իրավիճակում չհանդիսանալով ո՛չ հայտարարատու, ո՛չ էլ մաքսային) ներկայացուցիչ, չի կարող համարվել Մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված իրավախախտման համար պատասխանատվություն կրող սուբյեկտ: Նա չի կարող կրել մաքսային ներկայացուցչի պատասխանատվությունը, քանի որ մաքսային ներկայացուցիչը տվյալ դեպքում «ՊԱՐՏՆՈՅՐ ԿԱՐԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն է»:

Վերաքննիչ դատարանի 17.10.2024 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 28.09.2022 թվականի վճիռը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ «(...) Տվյալ պարագայում հայտարարատու «Պրոֆպանել» ՍՊ ընկերության մաքսային ներկայացուցիչ է հանդես եկել ոչ թե հայցվոր Ֆելիքս Բարսեղյանը, այլև «Պարտնյոր Կարգո» ՍՊ ընկերությունը /հայցվորը հանդիսացել է վերջինիս աշխատակիցը, որին «Պրոֆպանել» ՍՊ ընկերության տնօրենը տվել է լիազորագիր/:

Ֆելիքս Բարսեղյանը չի հանդիսացել ո՛չ հայտարարարու, ո՛չ էլ մաքսային ներկայացուցիչ, իսկ Մաքսային օրենսգրքի իմաստով «մաքսային ներկայացուցիչը» իրավաբանական անձ է, որը ներառված է մաքսային ներկայացուցիչների ռեեստրում և մաքսային գործառնություններ է կատարում հայտարարարուի կամ շահագրգիռ այլ անձի անունից և հանձնարարությամբ: Հայտարարարուի, փոխադրողի, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձի, այլ շահագրգիռ անձի անունից մաքսային գործառնությունները կարող է իրականացնել մաքսային ներկայացուցիչը, իսկ Մաքսային օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այդ անձանց հանձնարարությամբ գործող այլ անձ: Հայտարարարուն, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, պատասխանատվություն է կրում նախատեսված պարտականությունները չկատարելու, մաքսային հայտարարագրում ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու, ինչպես նաև մաքսային ներկայացուցչին անվավեր, այդ թվում՝ կեղծ և (կամ) ակնհայտ ոչ հավաստի (սույր) տեղեկություններ պարունակող փաստաթղթեր ներկայացնելու համար: Առհասարակ մաքսային հայտարարագրումն իրականացվում է հայտարարարուի կամ մաքսային ներկայացուցչի կողմից:

Նման պայմաններում ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության ուժով Ֆելիքս Բարսեղյանն չէր հանդիսանում վարչական պատասխանատվության ենթարկելու համար պատշաճ սուբյեկտ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Պրոֆպանել» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տրված 01.10.2021 թվական թիվ 10/21 լիազորագրի համաձայն՝ Ֆելիքս Բարսեղյանը հանդիսանում է «Պրոֆպանել» ՍՊԸ-ի մաքսային ներկայացուցիչ «Պարտնյոր Կարգո» ՍՊԸ-ի աշխատակից՝ մաքսային ձևակերպումների մասնագետ:

Ֆելիքս Բարսեղյանի կողմից «Պրոֆպանել» ՍՊ ընկերության անվամբ 11.10.2021 թվականի թիվ 05100010/111021/0063267 ապրանքների հայտարարագրով «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով հայտարարագրվել են 46,970 կգ ընդհանուր քաշով ապրանքներ՝ արևային պանելների արտադրության համար նախատեսված թրծված ապակիներ՝ 3.2 ՄՄ հաստությամբ՝ 3000 հատ:

Կոմիտեի Արարատյան մաքսատուն վարչության գլխավոր մաքսային տեսուչ-իրավաբանի կողմից 13.10.2021 թվականին կազմված «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ «Պրոֆպանել» ՍՊԸ-ի 13.10.2021 թվականի թիվ 05100010/111021/0063267 ապրանքների հայտարարագիրը ներկայացվել է ոչ ճշգրիտ տեղեկություններով: Այսինքն՝ Ֆելիքս Բարսեղյանի կողմից խախտվել են ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնները:

Կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պետի 13.10.2021 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1232/1 որոշման համաձայն՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մաքսային կանոնների խախտում կատարելու համար «Պրոֆպանել» ՍՊ ընկերության լիազոր անձ Ֆելիքս Բարսեղյանը

ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ տուգանվելով 384.000 ՀՀ դրամի չափով:

Այսպես. Դատարանի դիրքորոշման համաձայն՝ իրավաբանական անձ հանդիսացող մաքսային ներկայացուցչի աշխատակիցը, ով ֆիզիկապես իրականացնում է մաքսային ներկայացուցչի գործառնությունները, չի կարող Օրենսգրքի 203-րդ հոդվածում ամրագրված զանցակազմի սուբյեկտ համարվել: Նա մաքսային հարաբերություններում հանդես չի գալիս ո՛չ հայտարարատուի, ո՛չ մաքսային ներկայացուցչի կարգավիճակով: Ապրանքների հայտարարագրումը մաքսային ներկայացուցչի կողմից իրականացվելու դեպքում պատասխանատուն մաքսային ներկայացուցիչն է՝ անկախ նրանից, թե ով է վերջինիս անունից ֆիզիկապես կատարում անհրաժեշտ գործողությունները:

Վերաքննիչ դատարանի դիրքորոշման համաձայն՝ հայտարարատու «Պրոֆպանել» ՍՊ ընկերության մաքսային ներկայացուցիչ է հանդես եկել ոչ թե հայցվոր Ֆելիքս Բարսեղյանը, այլ «Պարտնյոր Կարգո» ՍՊ ընկերությունը: Ֆելիքս Բարսեղյանը չի հանդիսացել ո՛չ հայտարարատու, ո՛չ էլ մաքսային ներկայացուցիչ, իսկ Օրենսգրքի իմաստով «մաքսային ներկայացուցիչը» իրավաբանական անձ է, որը ներառված է մաքսային ներկայացուցիչների ռեեստրում և մաքսային գործառնություններ է կատարում հայտարարատուի կամ շահագրգիռ այլ անձի անունից և հանձնարարությամբ: Հետևաբար, Օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության ուժով Ֆելիքս Բարսեղյանը չէր հանդիսանում վարչական պատասխանատվության պատշաճ սուբյեկտ:

Հիմք ընդունելով վերը նշված դիրքորոշումները և դրանք համադրելով սույն գործի փաստական հանգամանքների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ և՛ Դատարանի, և՛ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումները հիմնավոր չեն, քանի որ ինչպես արդեն իսկ վերը նշվեց, իրավաբանական անձը Օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված արարքների համար պատասխանատվության սուբյեկտ չի կարող հանդիսանալ: Փոխարենը, պատասխանատվության սուբյեկտ կարող են հանդիսանալ ինչպես հայտարարատուի անունից հայտարարագրումը կատարած մաքսային ներկայացուցչի աշխատակիցը, այնպես էլ հայտարարատուն (իրավաբանական անձ հայտարարատուի պարագայում՝ ըստ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ համապատասխան պաշտոնատար անձը):

Ասվածի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ տվյալ դեպքում, հայտարարատու է հանդիսացել «Պրոֆպանել» ՍՊԸ-ն, իսկ «Պարտնյոր Կարգո» ՍՊԸ-ն հանդիսացել է մաքսային ներկայացուցիչ, որի անունից և հանձնարարությամբ Ֆելիքս Բարսեղյանը, 01.02.2021 թվականին կնքված «Մաքսային միջնորդական ծառայությունների մատուցման» թիվ 4 պայմանագրի հիման վրա, իրականացրել է մաքսային գործառնություն:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ֆելիքս Բարսեղյանը կարող է վարչական պատասխանատվության սուբյեկտ հանդիսանալ և նրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելու կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու համար վարչական պատասխանատվություն կարող է

կիրառվել այն պարագայում, եթե հաստատվի կատարված արարքում վերջինիս մեղավորությունը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել նաև հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները: Դատարանն անդրադառնում է նման իրավական փաստարկներին:

Տվյալ դեպքում բողոք բերած անձի կողմից, որպես իրավական փաստարկ, վկայակոչվել են թիվ ՎԴ/4748/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.10.2022 թվականի և թիվ ՎԴ/3684/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.04.2023 թվականի որոշումները, որոնցով արձանագրվել է, որ մաքսային ներկայացուցիչ իրավաբանական անձի աշխատակիցը կարող է Օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված արարքի համար վարչական պատասխանատվության սուբյեկտ հանդիսանալ այն պարագայում, եթե հաստատվի կատարված արարքում մաքսային ներկայացուցիչ իրավաբանական անձի աշխատակցի մեղավորությունը:

Իրացնելով օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու լիազորությունը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող Օրենսգրքի 203-րդ հոդվածի կիրառելիությունը՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, էական նշանակություն կունենա նշված իրավանորմի ուժով վարչական պատասխանատվության ենթարկված անձի կողմից վարչական պատասխանատվության մասին վարչական ակտը վիճարկելու վերաբերյալ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոգրյալ հարցը պարզելու նպատակով, ինչպես նաև գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու և վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունն օրենքով սահմանված կարգով գնահատելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակի, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 17.10.2024 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող և զեկուցող

_____ **Հ. ԲԵԴԵՎՅԱՆ**

_____ **Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

_____ **Լ. ՀԱԿՈԲՅԱՆ**